Մայիս 9–ին Ալեքսանդրապոլի զինուորական գործադիր կոմիտէի նախագահ Պրեզիրովը հեռագրում է Օղակոմի նախագահ Խարլամովին, որ Թուրքերը գողացել են պահակախմբի զէնքերը, և այդ պատճառով մի վաշտ զինուորներ խուզարկել են Թուրքական Թաղը:

Մայիս 13–ին Ալեքսանդրապոլի գաւառական կոմիսարը 101րդ երկրապահ հարիւրեակի զինուորների ու միլիցիոնների հետ խուզարկում է Կարսի շրջանի Օղչի–Օղլի գիւղը և բռնում 2 սայլ՝ 7 արկղ պետական հրացան ու փամփուշտ: Թուրք գիւղացիք կրակում են և վիրաւորում մի զինուոր:

Մայիսի առաջին երկու–երեք շաբաթների ընթացքում բազմաթիւ յարձակումներ եղան Օղնուտ—Երզնկայի շրջանի և Բասէնի հայ գիւղերի վրա: Յարձակման ու թալանի գոհերը, մեծ մասամբ, գաղթականները կամ զինուորական պահեստներն ու կայաններն էին:

Մայիս 29–ին քիւրդերը յարձակուեցին Սոուկ Սուի գօրակայանի վրա. եղաւ բուռն կռիւ:

Յունիս 1–ին յարձակման ենթարկուեց Գաւրիշամիի կառավարական պարենաւորման խումբը: Յունիս 8–ին քիւրդերը յարձակուեցին կազակների վրա Բայազէտի մօտ: Յարձակումներ եղան Արագածի շրջանում, Նոր–Բայազէտում, Սուրմալուում...

Յունիս 1—2–ին, Գեաւրիշամիի մօտ սպանուեցին 3 հայեր, վիրաւորուեց մէկը, քշուեց 80 բեռնակիր եզ, 2 ձի:

Յունիս 2–ին, Արհաջ գիւղի մօտ Վան վերադարձող 50–60 գաղթականներ կողոպտուեցին քիւրդերից, սպանուեց մի մարդ, քշուեց 60 եզ և 40 այլ անասուններ:

Յունիս 6–ին Արծափի և Մոսունի միջև քիւրդերը մորթեցին 6 հայեր:

Յունիս 15–ին 300 քիւրդեր քշեցին իգդիրցիների անասունները՝ սպանելով մէկ և վիրաւորելով 9 մարդ:

Յուլիս 14–ին քիւրդերը քշեցին ղամարլուցիների տաւարը՝ սպանելով ու վիրաւորելով մի քանի հայեր:

Զանազան տեղեր յարձակման էին ենթարկւում երկիր վերադարձող գաղթականները կամ թիկունք մեկնող զինուորները:

«Օգտւելով ժամ. Կառավարութեան ժամանակաւոր թուլութիւնից և պրովոկացիոն մութ ուժերի դրդումից, գրում էր յունիս 8–ին «Հորիզոն»–ը, Սուրմալուից Հայոց Զոր ու Հայոց Զորից մինչև Մամախաթուն քրդական աւազակարարոյ, մինչև ատամները զինուած հրոսախմբերը յարձակւում են խաղաղ բնակչութեան վրա, կողոպտում են, վիրաւորում ու սպանում...Զեն քաշւում անգամ զինուորների ու պարենատար գօրամասերի վրա էլ յարձակւելուց»:

Ի հարկէ, կարելի է ասել, որ քրդական աւազակութիւնները առաջ էլ սովորական երեւոյթ էին և թիւրքական սադրանքներով չպէտք է բացատրել, բայց փաստը ցոյց է տալիս, որ աւազակութիւններն ու յարձակումները կատարւում էին, մեծ մասամբ, ռազմագիտական նշանակութիւն ունեցող վայրերում, գաղթականների վերադարձի ճանապարհների վրա, գօրքի թիկունքում: Դժւար չէր տեսնել, որ այդ շարժումներն ունեն ներքին ծրագիր